

հաջողութիւնները և բարձր կարգապահութեան համար»¹ կրտսեր սերժանտ Հասմիկ Թամազյանին պարգևատրել պատվոգրով:

Փորձված ռազմիկ Թամազյանը մասնակցելով Ուկրաինայի, Բեսարաբիայի ազատագրմանը, մարտերով հասնում է մինչև Չեխոսլովակիա և մասնակցում նրա ազատագրմանը: Նա գործող ըմբռնում լավագույն զինվորական լինելով, միևնույն ժամանակ գլխավորում է դիվիզիոնի պարտիական կազմակերպութիւնը և որպէս պարտիական կազմակերպութեան քարտուղար իր ուժերը նվիրում է կոմունիստների քաղաքական դաստիարակութեան ու ստորագագծանման մարտական առաջադրանքների կատարման գործին:

Հեռաչափալին ստորաբաժանման հրամանատար, կապիտան Պալիովը և քաղցծով նրա տեղակալ մայոր Ժիլիինը ռազմաճակատից Թամազյանի հորը ուղարկած նամակում գրում են. «Միրիչի Գեորգ Հարութիւնի Թամազյան... Մեր ստորաբաժանման մէջ ծառայութիւնն անցկացնելիս, Չեր դուստրը իրեն զրտուրեց որպէս լավագույն աղջիկ-մարտիկներից մեկը: Ամբողջ ծառայութեան ընթացքում նա եղել է մարտական ու քաղաքական պատրաստութեան գերազանցիկ, համեստ ու կարգապահ մարտիկ»²:

Հայրենական պատերազմի հաղթական ավարտից հետո, շատերի հետ իր հայրենի օջախը վերադարձած Հասմիկ Թամազյանը: Ռազմաճակատում կոփված մարտիկը 1947 թ. ընդունվեց Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնին առնթեր երկամյա պարտիական դպրոցը: ավարտելուց հետո անցավ աշխատանքի կաշի գալանտերիայի ֆաբրիկայում որպէս ինժեներ-տեխնոլոգ և սկզբնական պարտիական կազմակերպութեան քարտու-

¹ ՀՊՊԿ արխիվ, 270, գ. 55ա, թ. 1:

² Նույն տեղում, թ. 2:

ղար, իր ուժերը նվիրելով խաղաղ ստեղծագործ աշխատանքի: Այժմ նա աշխատում է Հայաստանի արհեստագործական կոալերացիայի մանվածք արտելում, որպէս նախագահի տեղակալ՝ կազմ-մասսայական և կազրիքի գծով:

Կովկասը պաշտպանող մարտիկների շարքերում հետոսաբար պայքարում էին նաև մեծ թիվով հայ կապավոր կանայք՝ կապի վաշտի հրամանատար Աղափի Ավետիսյանը, ՀամԼԿԵՄ անդամներ՝ կրտսեր լեյտենանտներ՝ Քնարիկ Հարութիւնյանը, «Կարմիր Աստղ»-ի շրանշանակիր Վիկտորիա Մալախյանը, «Մարտական ծառայութեան համար» մեդալակիրներ՝ Լյուսյա Պողոսյանը և Վալենտինա Լիվյանը. նրանք մարտերի ամենածանր պայմաններում, թշնամու ուժեղ կրակի տակ անխափան էին պահում զորամասի կապը:

Ռազմաճակատում անխափան կապ պահպանող կոմերիտուճի Վալենտինա Լիվյանի մասին հրամանատարութիւնը նրա պարգևաթերթիկում գրել է. «Ընկ. Լիվյանը ապահովում էր անխախտ կապը գումարտակի և վաշտի միջև, մի քանի անգամ թշնամու կրակի տակ անց է կացրել հեռախոսային գիծ:

1943 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին նա ծովային հեռակալի 255-րդ կարմրադրոշ բրիգադայի 327-րդ ստանձին գումարտակի կազմում մասնակցել է Նովորոսիյսկ քաղաքի մոտ «Փոքր հողի» վրա մղվող մարտերին:

Աշխատելով որպէս կապավոր՝ ընկ. Լիվյանը մարտերի ժամանակ ապահովում էր գումարտակի հրամանատարական կետի և զորամասերի միջև պահպանվող կապը, սրանից բացի, մարտերի ծանր մոմենտներին նա մարտի դաշտից դուրս էր բերում վիրավորներին և նրանց ցույց տալիս բժշկական առաջին օգնութիւն»¹:

¹ ՀՊՊԿ արխիվ, ֆ. 270, գ. 90, թ. 1: